Ն Ա Խ Ա Գ Ի Ծ 13

----------------------

Արձանագրային

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին

------------------------------------------------------------------------------------------

Հավանություն տալ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Հ. Հակոբյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

------ 2010 թվական

## «ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-8-Ն օրենքի 1-ին հոդվածում՝

1) «2009 թվականի մայիսի 1-ն» բառերը փոխարինել «2010 թվականի նոյեմբերի 1-ն» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունման

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն երեք անգամ կատարվել է նմանատիպ փոփոխություն,որը մեծ խթան է հանդիսացել հարյուրավոր երիտասարդների վերադարձը Հայրենիք ապահովելու գործում: Օրենքի գործողության ժամկետը երկարաձգելով մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը, ևս մեկ անգամ հնարավորություն է տրվում մինչև 2010 թվականի աշնանային զորակոչը 27 տարին լրացած, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին սահմանված ժամկետում մուծել համապատասխան վճարը, և նրանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել :

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

Նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| /Առաջարկության/ դիտողության հեղինակը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|---|---|---|
| 1. ՀՀ ֆինանսների նախարարության 29.10.2010թ. 1/9.4/8273-10 գրություն | Առաջարկություն և դիտողություն չունեն: | |
| 2.ՀՀազգային անվտանգության ծառայություն 2010թ. N | Սահմանված ժամկետում պատասխան չի ստացվել : | |
| 3. ՀՀ արտաքին գործերի նախարարություն 03.11.2010թ. 16/17133-10գրություն | Առաջարկություն և դիտողություն չունեն: | |
| 4.ՀՀ պաշտպանության նախարարություն 02.11.2010թ.N ՊՆ/510-1275գրություն | Առաջարկություն և դիտողություն չունեն: | |
| 5. ՀՀ ոստիկանություն 35/1627 03.11.2010թ. N գրություն | Առաջարկություն և դիտողություն չունեն: | |
| 6ՀՀ դատախազություն | Սահմանված ժամկետում պատասխան չի ստացվել : | |
| 7.ՀՀ արդարադատության նախարարություն | Առաջարկություն և դիտողություն չունեն: | |